

րացիի փոխանորդութիւնը կը վարէ կամ
անոր հետեորդներուն մէջն է և կամ թե-
րևս աշակերտներուն մաս կը կազմէ:

Նկատի առնելով Քէօթահիացի Յակոբ
եպս. ի վարդապետական ուսմանց հետեւե-
լու և գաւազան առնելու առիթ ունեցած
չլլալը՝ շատ տնհաւանական է որ Մովսէս
Տաթևացիի եւ Ազարիա Սասունցիի հետ
Յակոբ եպս. Քէօթահիացի ալ Գրիգոր վրդ.
Կեսարացիի աշակերտած ըլլայ:

Իմ այս ենթադրութեանս ուժ կու տայ
իր իսկ յայտարարութիւնը, որով ինքզինքն
աշակերտ ցոյց կու տայ Գրիգոր վրդ. Կե-
սարացիի: Այսպէս 1618ին գրուած Սաղ-
մոսի մը եւ ժամագիրքի մը մէջ կ'ըսէ.
« . . . Եւ արդ ցանկացող եղէ եւ անարժան
յարեմայն բարեաց անխնաս եւ անպիսան յո-
ռին եւ իմար մեղաւ լցեալ Քաւքասիացի
Յակոբ եպիսկոպոս որ անուանքս եմ միայն եւ
գործովս ոչ. եւ ետն գրեշ զսա ի հաշտ ար-
դեանց իմոց ինձ եւ ծնադաց իմոց Տէր Պե-
տրոս ֆահանային եւ մաւրս Մարքային եւ մեծ
Մաւրս Ճագիկին եղբայրս Զաֆարիային եւ այլ
արեան մերձաւորաց: Գրեցաւ Սաղմոսարանս
ձեռնաւք անարժան եւ անպիսան եւ անխնաս
լեհցի գրչի գրի[գորի], ի բուսկանիս Հայոց
ՌԿԷին (= 1618) մայիս ԻԸ. ի ֆաղաֆն Քաւ-
քասիս ի դուռն Սրբոյն Սարգիս զաւրախարին